

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ ՈՐԱԿ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Քե՛ն միջին հայերենի առանձնացումը մեզ համար սովորական է և ունի գրեթե նույն բնույթը, ինչ անգլերենի և գերմաներենի պատմության մեջ միջին անգլերենի (Middle English) և միջին վերին գերմաներենի (Mittelhochdeutsch) առանձնացումը, բայց իրականում հայերենը հանդես է բերում մի շարք առանձնատկություններ, որոնց քննարկումը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի: Ով որ ուզում է գրել հայերենի գրավոր ժամանակաշրջանի ամբողջական պատմությունը, չի կարող հաշվի չնստել այդ առանձնատկությունների հետ և ծագող հարցերին գոնե մոտավոր պատասխան չտալ:

Առաջին հարցը, որ ծագում է միջին հայերենի կապակցությամբ, նրա պատմական կարգավիճակի հարցն է: Ինչպես նշվեց, սովորական է լեզուների, հատկապես եվրոպական մի շարք լեզուների համար միջին շրջանի առանձնացումը, և այսօր մեզ համար այդպիսի շրջանի կամ պատմական այդպիսի սրակի տարբերումը նույնպես սովորական է: Սակայն ի՞նչն է հիմք ծառայում այդպիսի շրջանաբաժանման համար. չէ՞ որ կան լեզուներ, որոնց համար միջին շրջան չի առանձնացվում (հմտ. ֆրանսերենը), և տարբեր լեզուների համար միջին շրջանի առանձնացման հիմքերը հավասարաթեք չեն. դրանք կարող են լիովին տարբեր լինել ժամանակադրորեն և որակապես: Արդ իրոք, որոնք են այդ հիմքերը՝ տրամաբանական պոստուլատը («եթե կան հին և նոր շրջաններ, ապա պետք է լինի դրանք միացնող՝ անցման շրջան»), ժամանակագրական պահարժեշտությունը («այդքան երկար ժամանակաշրջանի համար միայն երկու՝ հին և նոր շրջանների, առանձնացումը բավարար չէ»), պատմության փաստե՞րը («կան հին շրջանի և կան նոր շրջանի գրավոր հուշարձաններ, բայց կան գրավոր հուշարձաններ, որոնք չեն կարող վերագրվել ո՛չ հին և ո՛չ էլ նոր շրջաններին»):

Կարելի է ասել, որ միջին հայերենի առանձնացման համար մեր օրերում գեր են խաղում այս բոլոր հիմքերը, ներառյալ նաև լեզվաբանական ընդհանուր ավանդույթը: Սակայն հարկավոր է խոսել հայերենի որոշ առանձնատկությունների մասին:

XX դ. գրեթե բոլոր հայ հետազոտողները միջին հայերենը դիտում են որպես անցման շրջան հին հայերենից նոր հայերենին, կապող օղակ հին և նոր հայերենների միջև: Սակայն նոր հայերենը, ինչպես հայտնի է, երկփեղկված է արևմտահայերենի և արևելահայերենի: Արդ՝ միջին հայերենը միջին օղակ է հին հայերենի և երկու նոր հայերենների միջև, թե՞ հին հայերենի և դրանցից մեկի, մասնավորապես արևմտահայերենի միջև: Սրա հետ կապված հարկավոր է պատասխանել այն հարցին, թե միջին հայերենն ունեցել է, արդյոք, միասնական նորմա. այն մեկ լեզու է եղե՞լ, թե՞ նրա մեջ նկատելի են

նոր հայերենի երկու ճյուղերի նախնական տարբերությունները որպես երկու առանձին նորմաների նախավիճակներ:

Միջին հայերենի գրական վիճակի քննության կապակցությամբ մենք Կփորձենք ավելի մանրամասնորեն պատասխանել այս հարցին: Այստեղ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել այն բանի վրա, որ հարցին պետք է տարբերակված մոտեցում հանդես բերել:

Դեռևս 50-ական թվականներին հայոց լեզվի պատմության շրջանաբաժանմանը նվիրված մեր աշխատության մեջ մենք գրել էինք, որ հարկավոր է իրարից լավ տարբերել լեզվի պատմությունն ընդհանրապես և գրավոր, հատկապես գրական լեզվի պատմությունը մասնավորապես: Երբ մենք խոսում ենք հայոց լեզվի մասին ընդհանրապես՝ նկատի ունենալով նրա բոլոր տարատեսակների ամբողջությունը՝ անկախ գրի առնելուց կամ չառնելուց, ապա հասկանալի է, որ միջին հայերենը որպես բոլոր տարբերակների ամբողջություն իրոք միջին տեղն է գրավել հին հայերենի և նոր հայերենի միջև իբրև նույնպես բոլոր տարբերակների ամբողջությունների: Սա, իհարկե, փոքր-ինչ վերացական մոտեցում է, եթե մենք «տարբերակներ» բառը շենք լցնում որոշակի բովանդակությամբ, հենվում ենք միայն գրավոր հուշարձանների վրա, շենք կարողանում վերականգնել միջին հայերենի բանավոր տարբերակները վերականգնողական տարբեր մեթոդներով: Սակայն մեթոդաբանական առումով սա միակ ճշգրիտ մոտեցումն է:

Իրականում հետադուրսները միջին հայերենի մասին գաղափար են տալիս գերազանցապես միայն գրավոր հուշարձանների հիման վրա, այն էլ որոշակի ընտրությամբ և հաճախ անհրաժեշտ տարբերակում շեն դնում նորմավորված գրական լեզվի և գրավոր արտահայտություն ստացած լեզվական գանազան այլ դրսևորումների միջև: Միայն վերջին ժամանակներս տեղաշարժեր կատարվեցին պատմական բարբառագիտության մեջ այս հոդվածի հեղինակի և Հ. Մուրադյանի ջանքերով:

Միջին հայերենի կարգավիճակի քննության կապակցությամբ հարկավոր է մի քանի խոսք ասել «միջին հայերեն» անվանման մասին: Հայ լեզվաբանության պատմությունից հայտնի է, որ «միջին հայերեն» անվանումը այն բովանդակությամբ, որ նրա մեջ դրվում է, սկզբնապես շի եղել: Հայոց լեզվի պատմության նկատմամբ իսկական գիտական հայեցակարգի հեղինակը՝ Արևեն Այտընյանը, հայոց լեզվի, ավելի ճիշտ, աշխարհաբարի զարգացման պատմության «միջին դարեր» ասելով հասկանում է VI դ. վերջերից մինչև X դարն ընկած ժամանակահատվածը. բուն միջին հայերենը որպես լեզվական որակ նա վերագրում է XI—XIV դարերին և կոչում «նախնյաց կամ ստորին դարուց ուսմկորեն»: Այտընյանի ներմուծած «նախնյաց ուսմկորեն» անվանումը, որի տակ հասկացվում է հատկապես հասարակական մի որոշակի խավի՝ ուսմկների լեզուն, պահպանվում է միջին հայերենի մի այլ անխոնջ հետազոտողի՝ Ղևոնդ Հովնանյանի կողմից, որ Այտընյանի «Քննական քերականությունից» (1866) ավելի քան երեք տասնամյակ անց լույս է ընծայում իր «Հետազոտությունք նախնյաց ուսմկորենին վրա» աշխատության նախնական երկու պրակները (1897):

«Միջին հայերեն» անվանումը լայն հիմքեր է նետում սկսած Յ. Կարստի «Historische Grammatik der Kilikisch-Armenischen» գրքից (1901), և, կարելի է ասել, XX դարում դառնում է միակ գործածականը: Սրանով իսկ միջին հայերենը փաստորեն դիտվում է ոչ թե որպես հասարակական մի խավի, այլ ողջ հայերենի զարգացման վիճակ: Կարստը միջին հայերենը դիտում է որպես «հին և նոր հայերենների միջև ընկած անցման ժամանակաշրջան», որ

«հավասարապես տարրերվում է հին և նոր հայերեններից և ներկայացնում է լեզվական հատուկ շրջան» (էջ 2):

Այսպիսով, մեր օրերում միջին հայերենի անվանման հարցը կարելի է լուծված համարել, եթե մենք իրոք նկատի ենք առնում միջին շրջանի տարրերակներին ամբողջություներ. այդ անվանումն իրեն արդարացնում է և՛ տրամաբանորեն, և՛ ժամանակագրորեն, և՛ պատմականորեն: Այն միաժամանակ կամուրջ է ստեղծում հայերենի ու այլ լեզուների պատմության միջև և թույլ տալիս համարանական եզրակացություններ անել: Կարելի է միայն ասել, որ այստեղ նկատի է առնվում գրավոր շրջանի պատմությունը, և ավելի ճշգրտիտ լինելու համար մենք պիտի ասենք «հայերենի գրավոր պատմության միջին շրջան»:

Միջին հայերենի կարգավիճակի որոշման և անվան ամրապնդման համար էական դեր խաղացին Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», այս հոդվածի հեղինակի «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատությունը և «Միջին գրական հայերենի պատմության ակնարկներ» կուրսիվ մենագրությունը:

Այս կապակցությամբ մենք անցնում ենք երկրորդ կարևոր հարցին, որ ծագում է միջին հայերենի լեզվական որակի քննության կապակցությամբ. դա միջին հայերենի գրական արտահայտության հարցն է:

Խոսելով գրաբարի, որպես հին հայերենի գրական արտահայտության, և նոր գրական հայերենի մասին, մենք տեսնում ենք, որ գործ ունենք նորմավորված գրական լեզուների հետ, լեզուներ, որ հանդես են գալիս համեմատաբար միասնական վիճակով: Իհարկե, դժվար չէ պարզել, որ գրաբարի համար ամենամիասնական և ամենանորմավորված վիճակը V դարն է, մասնավորապես նրա առաջին կեսը (ավելի ճիշտ՝ մինչև V դ. 60-ական թթ.), նոր գրական հայերենների համար՝ XIX—XX դարերը, ընդ որում արևելահայ գրական լեզվի համար՝ XIX դ. 70-ական թթ. սկսված փուլը: Մյուս կողմից՝ այդ շրջաններում գրական նշված լեզուները գործառույթ են որպես միակ հնարավոր գրական լեզուներ:

Արդ ինչպիսի՞ն է վիճակը միջին հայերենի դեպքում: Կարելի՞ է արդյոք խոսել միջին հայերենի, որպես նույնպիսի նորմավորված և միասնական գրական լեզվի մասին: Այստեղ մենք ստիպված ենք հավաստել հետևյալը: Առաջին՝ եթե գրաբարի սկզբնական և նոր գրական հայերենների վերջին փուլերը բացահայտորեն նորմավորված և միասնական գրական լեզուներ են, ապա միջին հայերենի պատմության ողջ ընթացքում այդպիսի բացահայտորեն նորմավորված և միասնական վիճակ դժվար է արձանագրել. նրան հասուկ են ձևերի բազմազանությունը և բազմիմաստությունը: Երկրորդ՝ գրաբարը սղջ հին շրջանում և նոր գրական հայերենները XIX դ. կեսերից սկսած որպես գրական լեզուներ իշխող են և իրենց տարածման շրջաններում ուրիշ գրական լեզուների հետ գործառույթություններ չեն բաժանում. այլ է վիճակը միջին հայերենի դեպքում, երբ շարունակում է գործել գրաբարը որպես գրական լեզու՝ գործառույթների և սպասարկման բնագավառների բաժանմամբ: Այդ վիճակը կարելի է համեմատել միայն վաղ աշխարհաբարի շրջանի վիճակի հետ, երբ աշխարհաբարը նույնպես իր գործառույթները բաժանում էր գրաբարի հետ: Իայց չէ՞ որ այս շրջանում աշխարհաբարը դեռ լրիվ նորմավորված չէր և հանդես էր գալիս որպես գրական լեզվի հենց վաղ՝ նոր ձևավորվող վիճակ: Սա նշանակում է, որ միջին հայերենը երբեք չի հասել գրական լեզվի կատարյալ վիճակի. այն, բառիս բուն իմաստով, գրականացող լեզու է: Երրորդ՝ եթե նոր գրական հայերեններից արևմտահայերենը իշխում է արևմտահայերի և արևելահայերենը արևելահայերի մեջ, ապա միջին հայերենը փաստորեն իշխում

է միայն արեւմտյան շրջաններում և չունի որևէ մրցակից արեւելահայ շրջաններում. այս շրջաններում որպէս գրական լեզու գործում է գրաբարը, առանձին դեպքերում գրավոր արտահայտութիւն են գտնում բարբառները՝ առանց նորմավորման և միասնականացման որևէ ընդհանուր միտման (առանձին մանրաշրջաններում ընդհանրացման մասնակի միտումներով), գրաբարի ու կիրիկյան միջին գրական հայերենի որոշ ազդեցութեամբ:

Այսպիսով, մենք կարող ենք արձանագրել, որ միջին գրական հայերենը ունեցել է տարածական ու գործառական սահմանափակում և որպէս գրական լեզու չի հասել կատարյալ նորմավորման ու միասնացման: Բավական է նշել, որ 2. Մուրադյանը միջին հայերենի գրավոր հուշարձաններում նշում է բաղաձայնական շորս համակարգի առկայութիւն՝ 1) բուն միջին հայերենին վերագրվող եռաստիճան տեղաշարժ-տեղափոխութեամբ՝ ք, դ, գ, ձ, ջ (<պ, տ, կ, ծ, ն), պ, տ, կ, ծ, ն (<բ, դ, գ, ձ, ջ), փ, ք, ք, ք, ջ, 2) գրաբարատիպ և արեւելահայ գրականի տիպի՝ ք, դ, գ, ձ, ջ, պ, տ, կ, ծ, ն և փ, ք, ք, ք, ջ, 3) Մշո և Կառնո բարբառների տիպի՝ ք, դ, գ, ձ, ջ, պ, տ, կ, ծ, ն, փ, ք, ք, ք, ջ և 4) արեւմտահայ գրական լեզվի երկաստիճան խլազուրկ՝ ք, դ, գ, ձ, ջ (<պ, տ, կ, ծ, ն), փ, ք, ք, ք, ջ (<բ, դ, գ, ձ, ջ և փ, ք, ք, ք, ջ)՝:

Հայոց լեզվի զարգացման միջին շրջանում, դատելով եղած գրավոր հուշարձաններից, մենք ունեցել ենք բառիս բուն իմաստով գրականացող միայն մեկ լեզու, որ ձգտել է միասնացման ու նորմավորման, բայց չի հասել այդ աստիճանին ոչ դասական գրաբարի, ոչ էլ XX դ. արեւմտահայ և արեւելահայ գրական լեզուների շահով:

Այս առումով հետաքրքրական են բարբառների բազմահատկանիշ դասակարգման կապակցութեամբ մեր ստացած վիճարկագրական տվյալները: Ըստ 100 հատկանիշի դասակարգելով արդի հայ բարբառները և ըստ 40 հատկանիշի V դարի բարբառները՝ մենք աղյուսակի մեջ մտցրել և փորձել ենք այդ հատկանիշներով գնահատել նաև գրաբարը, կիրիկյան միջին գրական հայերենը, արեւմտահայերենը և արեւելահայերենը: Ստացված վիճակագրական տրվյալները ամփոփված են հատուկ հոդվածում²: Ըստ այդ տվյալների արված են հետևյալ եզրակացութիւնները.

1. «Միջին գրական հայերենը և արեւմտահայ գրական լեզուն մեծապես տարբերվում են արեւելահայ գրական լեզվից գրաբարից ունեցած իրենց տարբերութիւնների բաշխմամբ. արեւելահայ գրական լեզուն առաջին երկուսից ավելի մոտ է գրաբարին հնչյունապես և ավելի հեռու քերականապես»:

2. «Արեւմտահայ գրական լեզուն, ինչպէս և սլաւոնի էր, երկու անգամ ավելի մոտ է միջին գրական հայերենին, քան արեւելահայ գրական լեզուն, առանձնապէս աչքի ընկնող են վերջիններիս քերականական տարբերութիւնները. սա նշանակում է որ արեւմտահայ գրական լեզուն հանդես է գալիս որպէս միջին գրական հայերենի ժառանգը՝ ավելի մոտ լինելով սրան, քան գրաբարին, մինչդեռ արեւելահայ գրական լեզուն ավելի հեռու է կանգնած (կիրիկյան) միջին գրական հայերենից, քան գրաբարից, որ բացատրվում է նրա և (կիրիկյան) միջին գրական հայերենի բարբառային հիմքերի տարբերութեամբ»:

Սրբորդ հարցը, որ ծագում է միջին հայերենի քննութեան կապակցութեամբ, նրա գրական և բարբառային արտահայտութիւնների փոխհարաբերութեան

¹ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ. Ա. Երևան, 1972, էջ 128:

² Պ. Բ. Ջաֆուկյան, Գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը ըստ վիճակագրական տվյալների, «Լրաբեր Ռասարական գիտությունների» 1971, № 5, էջ 45—47:

հարցն է: Հայտնի է, որ գրաբարը հենց սկզբից հանդես է եկել որպես նոր-մավորված գրական լեզու, որի ժամանակ գոյություն ունեցող բարբառների մասին մենք ենթադրություններ ենք անում՝ 1) մատենագրական վկայությունների, 2) գրաբար տեքստերում տեղ գտած տարբերությունների, 3) հնդեվրոպական բարբառային ձևերի հետքերի և 4) նոր ժամանակի բարբառների հին վիճակների վերականգնման հիման վրա: Երկու նոր գրական հայերենները մշակման ու նորմավորման են ենթարկվել, և նրանց ու բարբառների միջև եղած տարբերությունները որոշակի են: Եթե նրանք բարձրացել էլ են որոշ բարբառային հիմքերի վրա, ապա առկա վիճակով այդ բարբառային հիմքերը խիստ տարբերվում են գրական նորմավորված ձևերից: Արդ՝ մի կողմից՝ գոյություն ունի՝ այդպիսի որոշակի տարբերություն միջին հայերենի պարզոր առտահայտությունների և բարբառների միջև, մյուս կողմից՝ ո՞րն է եղել այն բարբառային հիմքը, որի վրա բարձրացել է միջին հայերենը որպես գրական լեզու, և որքանով է միջին գրական հայերենը տարբերվում այդ բարբառային հիմքից:

Այս հարցերից ամենից ավելի վստահելի եզրակացություններ կարելի է անել հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման արդյունքների, այդ թվում՝ արդի բարբառների հիման վրա վերականգնված V դ. բարբառային վիճակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա:

Հիշյալ հոդվածում արված են հետևյալ եզրակացությունները.

1. «Ըստ 40 հատկանիշ պարունակող ցուցակի՝ կիլիկյան միջին գրական հայերենին ամենից ավելի մոտ են ոչ թե արևելյան Կիլիկիայի (Մարաշի, Զեյթունի, Հաջնի) կամ, այսպես կոչված, անտիոքահայ (Քաբուսիի, Հաջի-Հաբիբլիի, Յողուն-Օլուկի, Արամոյի, Քեսաբի, Բեյլանի) խոսվածքները, որոնք եզրային դիրք են դրավել բուն Կիլիկիայի նկատմամբ, այլ առաջին հերթին Հյուսիսային Աղձնիքի կամ Սանասունի (Սասունի) ենթաբարբառի խոսվածքները (Այգեստանի, Գեղեղուպանի, Նիշի, Հազզոյի), ապա այն ենթաբարբառների ու միջենթաբարբառների (Տուրուբերանի, արևելյան բարձր Հայքի, Այրարատի Բագրևանդ գավառի, այլև Տրապիզոնի, Օրդուի, Առդեալի) խոսվածքները, որոնք մոտ են եղել նաև գրաբարին (ընկած էին նրա հիմքում): Սա դույց է տալիս, որ՝ ա) Կիլիկիայի կազմավորման մեջ մեծ դեր է խաղացել Սանասունից գաղթած բնակչությունը, բ) Կիլիկյան «բարբառի» այն ժամանակվա վիճակը չի համընկնում արդի բարբառագիտական աշխատություններում տրված վիճակի հետ, այն շատ ավելի լայն ընդգրկում է ունեցել և դաշխորեն տարբերվել է եզրային (արևելյան Կիլիկիայի և անտիոքահայ) խոսվածքներից, գ) կիլիկյան միջին գրական հայերենի խոսակցական հիմքը կազմել են ոչ միայն բուն Կիլիկիայի, այլև արևմտյան վայրերի հիմնական խոսվածքները՝ ոչ շատ մեծ տարբերություններով... Այսպիսով, կիլիկյան միջին գրական հայերենը եղել է Հայաստանի արևմտյան շրջանների համար ընդհանուր հասկանալի լեզու՝ լայն խոսակցական հիմքով»:

2. «Գրական լեզուներից ոչ մեկը իր հնչյունական և քերականական հատկանիշներից նույնը չէ որևէ խոսվածքի, առավել ևս՝ բարբառի հետ: Սա նշանակում է, որ գրական լեզուները մշակման գործընթացում զգալիորեն հետացել են իրենց բարբառային հիմքերից և ձեռք բերել ընդհանրացնող գծեր՝ ենթարկվելով նաև այլ բարբառների (միջին և նոր գրական լեզուները նաև պրաբարի) ազդեցությանը: Գրաբարը ավելի հեռու է իր հիմքում ընկած խոսվածքներից ու բարբառներից, քան միջին հայերենը, որ խոսում է վերջինիս ավելի «բնական» վիճակում գտնվելու, իր բարբառային հիմքից քիչ հեռանալու և ընդհանրապես նրա մշակման ու միօրինակացման գործընթացի ոչ ինտենսիվ լինելու մասին»:

Չորրորդ կարեւոր հարցը, որ ծագում է միջին հայերենի կապակցութեամբ, որա՞ ժամանակագրական սահմանների հարցն է: Իհարկե, լեզվի զարգացման գործընթացի համար բնորոշ է ժառանգորդութունը, և ամեն մի լեզվական որակի փոփոխութեան ու նոր որակի առաջացման սահմանները պայմանական են: Սակայն որակի փոփոխութունը սովորաբար արտահայտվում է նոր գրական լեզվի, որպէս գրական նոր նորմայի, գոյացմամբ: Այս առումով հասկանալի է, որ խոսքը գնում է ոչ թե միջին հայերենի առանձին տարրերի, այլ նրա՞ որպէս լեզվական նոր որակի մասին: Մինչև որոշ շրջան առանձին հեղինակներ այս կամ այն չափով տուրք են տվել դրաբարի նորմաներից շեղվող ժողովրդախոսակցական և բարբառային տարրերի, բայց ե՞րբ է ամբողջով այն փաստը (գոնե որոշ տարածքներում), որ կարելի է գրել ոչ թե գրաբարով, այլ նրանից տարբեր մի լեզվով, որով գրում են նաև ուրիշները, այսինքն՝ հանդես է եկել լեզվական նոր նորմա, գրաբարից եղած տարբերութիւններն ընկալվել են ոչ թե որպէս շեղումներ, այլ մի ուրիշ գրական լեզվի հատուկ նորմատիվ ձևեր:

Միջին հայերենի ժամանակագրական սահմանները տարբեր հեղինակների կողմից գնահատվել են տարբեր ձևով՝ նայած թե գնահատման համար ի՞նչն է հիմք ընդունվել: Մասնավորապէս դեր է խաղացել այն հանգամանքը, որ համեմատութեան մեջ չեն դրվել հին, միջին և նոր շրջանի գրական լեզուների ժամանակագրութեան փաստերը, դրանք հաճախ առնվել են իրարից անկախ, արևմտահայ և արևելահայ գրական լեզուների կազմավորման ու ձևավորման մասին խոսողները հաճախ այս գործընթացները դիտել են առանց կապելու միջին հայերենի պատմութեան հետ:

Ահա ստացվել է մի վիճակ, երբ միջին հայերենի ժամանակագրական սահմանները տարբեր հեղինակների մոտ սեղմվել կամ ընդարձակվել են, և դրանց տարբերութիւնները հասել են հաճախ մի քանի դարի:

Միջին հայերենի սահմանները նեղ մոտեցման դեպքում սովորաբար սահմանափակվել են Կիլիկյան հայկական պետականութեան ժամանակաշրջանով, հատկապէս XII—XIV դարերով: Ամենից լայն մոտեցման դեպքում դրանք զետեղվում են X—XVII դարերի սահմաններում. այսպէս, Ս. Ղազարյանը իր «Հայոց լեզվի համառոտ պատմութեան» մեջ գրում է. «Միջին հայերեն ասելով մենք հասկանում ենք X—XVII դարերի հայ գրականութեամբ ավանդված լեզվական այն բազմազան տարրերի ամբողջութունը, որ հասկանալի էր տարբեր բարբառներով խոսող հայ ժողովրդի տարբեր հատվածներին»³:

Ի՞նչ կարելի է ասել այս կապակցութեամբ:

Նախ խոսենք միջին հայերենի ժամանակագրական ստորին սահմանի մասին: Կարելի՞ է արդյոք միջին հայերենի ստորին սահմանը տանել մինչև X դարը, այսինքն՝ ներառել նրա մեջ X—XI դարերը: Չի կարելի, և ահա թե ի՞նչ նկատառումներով: Առաջին՝ X—XI դարերում բացակայում է միջին հայերենի համար ամենից ավելի բնորոշ՝ ներկայի ու անցյալ կատարյալի կուկազմիչը, որ տարածվում է հայերենի ընդգրկման գրեթե բոլոր վայրերում, և որ արևմտահայ գրական լեզվում կու, կը, կ՛ ձևերով կազմում է ներկան, արևելահայերենում կ(ը) ձևով ապառնիւն: Առանց կու-ից ստացված ձևերի չի կարելի պատկերացնել ոչ միջին և ոչ էլ նոր շրջանների պատմութունը: Երկրորդ՝ X—XI դարերի գրական այն հուշարձանները, որոնց լեզուն բավականաչափ մոտ է միջին հայերենին, իրենց ժամանակի գրական լեզվի համար, ինչպէս նշվեց, ավելի շուտ բացառութիւններ են, քան բնորոշ փաստեր: Երրորդ՝ միջին հայերենի գրական հուշարձաններից ամենից ավելի բնորոշ են

³ Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմութուն, Երևան, 1954, էջ 281:

րանաստեղծական երկերը, որոնք այս դարերում բառիս բուն իմաստով չեն սկզբնավորվել: Միջին հայերենի սկիզբը կարելի է տանել XII դարը, բայց ոչ ավելի վաղ:

Ի՞նչ կարելի է ասել միջին հայերենի վերին սահմանի մասին: Կարելի՞ է այն հասցնել մինչև XVII դարը, և վերջինս ներառել միջին հայերենի պատմության սահմանների մեջ: Այս դեպքում կարող են բերվել հետևյալ առարկությունները: Առաջին՝ եթե XVII դարում կան նախորդ դարերի համար բնորոշ լեզվական դրսևորումներ, բայց դրանք ավելի շատ արդյունք են ավանդույթի կամ ընդօրինակման, քան թելադրված են ժամանակի բուն պահանջներով. այս դեպքում էլ հարկավոր է հաշվի առնել, որ որոշ երկերի վերաբերյալ ժամանակագրական տվյալները և պատկանելիությունը միջին հայերեն գրականությանը վիճելի են: Երկրորդ՝ XVII դարում արդեն տվյալներ կան, որ իբրև լեզվական նոր որակ գոյություն ունի գրական աշխարհաբարի նախավիճակը, այսպես կոչված, «քաղաքացիական հայերենը»: Հովհաննես Հոլովը 1674 թ. հրատարակած զրաբարի հայերեն և 1675 թ. հրատարակած լատիներեն քերականության մեջ տարբերում է հայոց լեզվի երեք վիճակ՝ 1) բուն հայկական (haigica) կամ զրաբար, 2) «աշխարհական» (vulgaris)՝ ժողովրդաբարբառային, և 3) «քաղաքական» (իմա՝ քաղաքացիական, civilis). վերջինս, լստ նրա, «է խառնեցեալ յերկոցունցն, այսինքն՝ ի հայկականէ և յաշխարհականէ, վասն որոյ և մասամբ ինչ կանոնաւոր և մասամբ իւրք անկանոն, զոր ի կիր արկանեն ատենախօսք և փաստարանք»⁴: Եթե Հովհաննես Հոլովը XVII դ. 70-ական թվականներին արձանագրում է այս վիճակը, ապա պարզ է, որ այն պատմական ձևավորման որոշ շրջան էր անցել, որոշ չափով նորմավորվել, և ճիշտ կլինի XVII դարը դիտել որպես առաջին հերթին հենց այդ «քաղաքացիական» հայերենի կամ վաղ գրական աշխարհաբարի ձևավորման շրջան: Իհարկե, մենք կարող ենք ասել, որ միջին հայերենը գոյատևում է մինչև XVII դ. սկզբները, բայց դա էական փոփոխություն չի մտցնում ընդհանուր հայեցակարգի մեջ. XVII դարը բուն առումով ոչ թե միջին հայերենի շրջան է, այլ անցման շրջան դեպի նոր հայերենը, այն չի կարող շարունակել նոր հայերենի պատմության մեջ որպես նախնական փուլ: Այդ դարում եղած ոչ զրաբար և ոչ միջին հայերեն հուշարձանները վաղ աշխարհաբարով են և ձգվում են գրեթե ողջ XVII դարով:

Վերջապես, չի կարելի ճիշտ համարել նաև միջին հայերենի սահմանափակումը XII—XIV դարերով: Ճիշտ է, չկար կիլիկիայի հայկական պետականությունը, որի ժամանակ միջին հայերենը հանդես է գալիս որպես յուրատեսակ պետական լեզու և նորմավորվում միասնական կենտրոնից, բայց շատ ուժեղ էր լեզվական ավանդույթը: Միջին հայերենը չի կարելի պատկերացնել առանց այնպիսի հուշարձանների, որոնք պատկանում են XV—XVI դարերին, մասնավորապես առանց Ամիրդովլաթ Ամասիացու բժշկական աշխատությունների, Հովհաննես Թըլկուրանցու (XIV—XV դդ.), Մկրտիչ Նաղաշի և Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծությունների:

Մնում է հավաստել, որ հարցի ամենից ավելի ճշգրիտ լուծմանը մոտենում է դեռ 1956 թ. առաջարկված մեր շրջանաբաժանումը, ըստ որի՝ միջին հայերենի սահմանները որոշվում են XII—XVI դարերով, և սրանց մեջ առանձնացվում են XII—XIV դդ. որպես կիլիկյան նորմավորման և XV—XVI դարերը՝ որպես աշխարհաբարացման հնթաշրջաններ:

⁴ Հտոթիւմ հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, շարադրեցեալ ի Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցոյ, Հոռմ, 1674, էջ 8:

Г. Б. ДЖАУКЯН—Среднеармянский язык как языковое качество.— Хотя в настоящее время выделение среднеармянского языка воспринимается как нечто само собой разумеющееся, однако с ним связаны некоторые проблемы, без решения которых нельзя написать историю армянского языка.

Первая проблема—это проблема его статуса. В настоящее время можно сказать, что в основу выделения среднеармянского языка ставится целый комплекс критериев—как логическая, хронологическая и историческая необходимость, так и установившаяся лингвистическая традиция. С проблемой статуса связано название «среднеармянский язык». Если распространенное в XIX в. название «просторечие предков» (пахпеас' гаткоген) было связано с пониманием среднеармянского языка как достояния определенного общественного слоя—мужицкого языка в отличие от дворянского, то с введением названия «среднеармянский язык» он стал рассматриваться как особое качество (период) развития армянского языка в общем.

Вторая проблема—это проблема письменного выражения среднеармянского языка. В настоящее время можно констатировать, что среднеармянский язык не дошел до состояния полной нормализации и стандартизации и не стал единым для всей территории распространения армянского языка.

Третья проблема—проблема соотношения среднеармянского «литературизирующегося» языка и его диалектной основы. Можно сказать, что понятие диалектной основы среднеармянского языка шире, чем понятие киликийского диалекта в настоящее время, и что среднеармянский литературный язык выступал в более «натуральном» виде, чем древнеармянский (грабар) и новые литературные языки—западноармянский и восточноармянский.

Наконец, четвертой проблемой является проблема хронологических границ среднеармянского. Имело место как сужение, так и расширение границ этого периода. В настоящее время все факты говорят в пользу предложенной автором в 1956 г. периодизации, согласно которой среднеармянский период охватывал XII—XVI вв. и прошел два подпериода—килийской нормализации (XII—XIV вв.) и ашхарабизации (XV—XVI вв.).